ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Տվյալ դեպքում հայցվորը հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի գումարը նախապես վճարել է 45.000 ՀՀ դրամի չափով, սակայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետք է վճարեր 30.000 ՀՀ դրամ, ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ 15.000 ՀՀ դրամ ավել վճարված պետական տուրքը ենթակա է վերադարձման բողոք բերողին, իսկ մնացած՝ 30.000 ՀՀ դրամը ենթակա է բռնագանձման պատասխանողից հօգուտ հայցվորի:

Անդրադառնալով առաջին ատյանի դատարանում հայցվորի ներկայացրած՝ փաստաբանի խելամիտ վարձատրության փոխհատուցման պահանջին, ապա հիմք ընդունելով հայցվորի և փաստաբան Հ. Հարությունյանի միջև 15.01.2024 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը, որի գինը սահմանվել է 200.000 ՀՀ դրամ, ինչպես նաև սույն գործի բնույթը, բարդությունը, տևողությունը, ելքը, ներկայացուցչի կատարած աշխատանքների ծավալը և այլ կարևոր հանգամանքները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պահանջվող 200.000 ՀՀ դրամը հանդիսանում է փաստաբանի վարձատության խելամիտ չափ, որն էլ ենթակա է բռնագանձման պատասխանողից հօգուտ հայցվորի:

Ինչ վերաբերում է վերաքննիչ ատյանում դատական ծախսերի բաշխմանը, ապա դրանք կազմված են միայն պետական տուրքի գումարից, որը բողոքաբերը նախապես վճարել է, հետևաբար բողոքի բավարարման պայմաններում 60.000 ՀՀ դրամ պետական տուրքը ենթակա է բռնագանձման պատասխանողից հօգուտ հայցվորի:

Մնացած մասով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վերոգրյալ պատճառաբանությունների և եզրահանգումների հիման վրա Վերաքննիչ դատարանը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ, 386-րդ և 387-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

Վերաքննիչ բողոքը բավարարել: ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ **ԵԴ2/0918/02/24** քաղաքացիական գործով 26.03.2024 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը բավարարել.

անվավեր ճանաչել 12.07.2023 թվականին կնքված թիվ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-4 պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի միակողմանի լուծումը և որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի 08.01.2023թ. թիվ 3 որոշումը՝ «Լենտեքս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտից հօգուտ «Լենտեքս» ՍՊԸ բռնագանձել 30.000 դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 200.000 դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության փոխհատուցման գումար, 60.000 դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանում հայցադիմումի համար ավել վճարված 15.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը ենթակա է վերադարձման հայցվորին, իսկ մնացած մասով դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումը կատարում պահանջող մասով կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:

ԴԱՏԱՎՈՐ
Հ.ԵԼՈՒԲՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
Կ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Ն.ՄԱՐԳԱՐՅԱՆ
Ունեմ հատուկ կարծիք:

Որոշումը մտել է օրինական ուժի մեջ:
Նախագահող դատավոր Ն.ՄԱՐԳԱՐՅԱՆ